Նախագահ
Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության
Առաջին Խորհրդական



Մորմոնի Գիրքը որպես Անձնական Ուղեցույց

Ամեն ամենահոգևոր պահերին մենք բոլորս ցանկություն ենք զգում տուն վերադառնալու և Աստծո հետ ապրելու: Նա տվել է մեզ որպես մեր Փրկիչ Իր Սիրելի Որդու պարգևը, ուղի պատրաստելով և մեզ սովորեցնելով հետևել դրան: Ճանապարհը ցույց տալու համար Նա մեզ մարգարեներ է տվել: Ջոզեֆ Սմիթ Մարգարեն ոգեշնչվեց թարգմանելու մարգարեների արձանագրությունները՝ Մորմոնի Գիրքը: Այն մեր ստույգ ուղեցույցն է առ Աստված մեր տան ճանապարհին:

Ջոզեֆ Սմիթն այդ թանկագին գրքի վերաբերյալ ասել է. «Ես ասացի եղբայրներին, որ Մորմոնի Գիրքն ամենաճիշտն է երկրի վրա եղած բոլոր գրքերից և մեր կրոնի պորտաքարն է, և ապրելով ըստ դրա ցուցումների, մարդ ավելի շատ կմոտենա Աստծուն, քան ըստ որևէ այլ գրքի ցուցումների»:[1]

Մորմոնի Գրքի ցուցումները Աստծո պատվիրաններն են: Որոշ ցուցումներ Իր մարգարեների միջոցով տրված Փրկչի ուղիղ պատվիրաններն են այն մասին, ինչ մենք պետք է անենք և ինչպիսին մենք պետք է դառնանք: Մորմոնի Գիրքը մեզ տալիս է Փրկչի օրինակը՝ մեր հավատքը մեծացնելու և Նրան հետևելու պատվիրանին հնազանդվելու համար: Գիրքը լի է Քրիստոսի վարդապետությամբ՝ մեզ առաջնորդելու համար: Ահա մի օրինակ 2 Նեփիից.

«[Հիսուսն] ասել է մարդկանց զավակներին. Հետևի՛ր ինձ: Ուստի, իմ սիրելի՛ եղբայրներ, կարո՞ղ ենք մենք հետևել Հիսուսին, եթե մենք հոժար չլինենք՝ պահելու Հոր պատվիրանները:

Եվ Հայրն ասել է. Ապաշխարեք, ապաշխարեք և մկրտվեք, իմ Սիրելի Որդու անունով» (2 Նեփի 31.10-11):

Գիրքը պարզ ասում է, որ մենք պետք է ստանանք Սուրբ Հոգին որպես կրակով մկրտություն՝, որը կօգնի մեզ մնալ նեղ և անձուկ արահետի վրա: Մեզ սովորեցրել են, որ մենք պետք է միշտ աղոթենք Քրիստոսի անունով, չթուլանալով, և այդ անելով մենք ունենք այս խոստումը. «Ուստի, դուք պետք է առաջ մղվեք Քրիստոսի հանդեպ հաստատամտությամբ, ունենալով հույսի կատարյալ պայծառություն, և սեր՝ Աստծո հանդեպ և բոլոր մարդկանց հանդեպ: Ուստի, եթե դուք առաջ մղվեք, սնվելով Քրիստոսի խոսքով, և համբերեք մինչև վերջ, ահա, այսպես է ասում Հայրը. Դուք կունենաք հավերժական կյանք» (2 Նեփի 31.20):

Բենիամին Թագավորի հրաշալի քարոզում Մորմոնի Գիրքը պարզ է դարձնում, թե ինչ է նշանակում սեր ունենալ Աստծո և բոլոր մարդկանց

հանդեպ: Երբ մեր էությունը փոխվի Քավության զորության և պատվիրաններին մեր հավատարիմ հնազանդության միջոցով, մենք լցված կլինենք Աստծո սիրով (տես Մոսիա 4.1–12):

Մորմոնի Գիրքը նաև տալիս է մեզ վստահություն, որ մենք կարող ենք դառնալ այնքան մաքրված այս կյանքում, որ այլևս ցանկություն չենք ունենա չարիք գործելու (տես Մոսիա 5.2): Այս հույսը մեզ համարձակություն և հանգստություն է տալիս՝ մինչ Սատանան փորձում է գայթակղել ու հուսահատել մեզ մեր ճանապարհին:

Ամեն անգամ Մորմոնի Գրքից նույնիսկ մի քանի տող ընթերցելիս ես զգում եմ, ինչպես է ամրանում իմ վկայությունը այն մասին, որ գիրքը ճշմարիտ է, որ Հիսուսը Քրիստոսն է, որ մենք կարող ենք հետևել Նրան դեպի տուն և որ մենք կարող ենք նրանց, ում սիրում ենք, մեզ հետ տուն տանել: Այն ինձ համար եղել է գրքերի գիրքը: Այն Աստծո խոսքն է:

Ես աղոթում եմ, որ մենք և նրանք, ում մենք սիրում ենք, խմեն դրանից առատորեն և ամեն օր: Ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, որ այն ճշմարիտ ուղեցույց է:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. *Teachings of Presidents of the Church: Joseph Smith* (2007), 64.

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

«Երբ մենք օգտագործում ենք սուրբ գրությունները և վերջին օրերի մարգարեների խոսքերը որպես մեր բոլոր ուսուցումների աղբյուր, մենք հրավիրում ենք Հոգուն վկայություն բերելու: Դա մեր ուսուցմանն ավելացնում է «Աստծո զորությունը՝ մարդկանց համոզելու համար» (ՎԱՈՒ 11.21)» (*Ուսուցում, Չկա Ավելի Մեծ Կոչում* [1999], 51): Նախատեսեք կարդալ Նախագահ Այրինգի ելույթի հիմնական գաղափարները, ներառյալ Ջոզեֆ Սմիթի խոսքերը Մորմոնի Գրքի վերաբերյալ: Հրավիրեք ընտանիքի անդամներին կիսվել նրանով, թե Մորմոնի Գրքում գտնվող ուսմունքներով ապրելը ինչպես է օգնում նրանց մոտենալ Աստծուն:

«Երբ սովորողները սուրբ գրություններից սկզբունքներ են քննարկում, նրանք սուրբ գրությունների անձնական ուսումնասիրության համար անհրաժեշտ հմտություններ են զարգացնում» (*Ուսուցում՝ Չկա Ավելի Մեծ Կոչում,* 54): Մտածեք, թե ինչպես կարող եք կարդալ այս ուղերձի սուրբ գրությունների հղումները, և փնտրել ու քննարկել դրանցում ուսուցանվող սկզբունքները:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Իմ Անձնական Մորմոնի գիրքը

Հիլարի Հոլբրուք

2005-ի օգոստոսին, երբ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին (1910-2008) Եկեղեցու անդամներին հանձնարարեց կարդալ Մորմոնի Գիրքը մինչև տարվա վերջ, ես խոստացա ինքս ինձ՝ կարդալ ամբողջ գիրքը: Ես ծանոթ էի Մորմոնի Գրքի պատմություններին, բայց երբեք այն սկզբից մինչև վերջ չէի կարդացել: Այժմ ես մտադրված էի պահել իմ խոստումը:

Ինձ սովորեցրել էին սուրբ գրությունները վերագրել իմ կյանքին և դարձնել դրանք իմ իսկ անձնականը: Ուստի, մինչ ես կարդում էի, էջի լուսանցքներում գրում էի, թե, իմ կարծիքով, որն էր հատվածի հիմնական գաղափարը: Ես նաև ընդգծում էի կրկնվող բառերն ու արտահայտությունները՝ դրանց կարևորությունը ցույց տալու համար:

Սուրբ գրություններում անունների կողքին ես գրում էի իմ անունը, ինչը կօգներ ինձ հիշել, որ ուրիշներին ասված Աստծո խոսքը կարող է նաև ինձ ուղված լինել: Օրինակ, 2 Նեփի 2.28-ում ես գրեցի իմ անունը. «Եվ այժմ, [Հիլարի], ես կկամենայի, որ դուք նայեք մեծ Միջնորդին և ականջ դնեք նրա մեծ պատվիրաններին»: Որքան ավելի էի ես Մորմոնի Գիրքը դարձնում իմ անձնականը, այնքան ավելի էր ոգևորվում այն ամեն օր կարդալու:

Մինչ ես ամեն օր կարդում էի, իմ աղոթքները դառնում էին անկեղծ ու անձնական: Ես նաև կարողացա կենտրոնանալ իմ դասերի վրա և հետևել ուրիշների հետ ընկերանալու Հոգու հուշումներին: Տարվա վերջին գիշերը ես ավարտեցի Մորմոնի Գիրքը:

Հետո ես հասկացա Մորմոնի Գիրքը, ինչպես նաև մյուս սուրբ գրությունները, ամբողջությամբ կարդալու կարևորությունը, և ուզում եմ այդ անել բազում անգամներ իմ կյանքում:

Ուղեցույց, որը կօգնի մեզ տուն վերադառնալ

Ինչպե՞ս դուք ձեզ կզգայիք, եթե մոլորվեիք և չիմանայիք տուն՝ ձեր ընտանիք վերադառնալու ճանապարհը: Դուք ուրախ կլինեի՞ք, եթե կարողանայիք հետևել ինչ-որ մեկին, ով կարող էր ձեզ ցույց տալ ճանապարհը: Նախագահ Այրինգն ասում է, որ Մորմոնի Գիրքը նման է ուղեցույցի, որն օգնում է մեզ վերադառնալ տուն՝ Երկնային Հոր մոտ:

Ստորև որոշ բաներ են, որ Մորմոնի Գիրքը մեզ ասում է, որ մենք պետք է անենք՝ տուն վերադառնալու համար: Կարդացեք 2 Նեփի 31.10,11,20: Ստորև գտնվող յուրաքանչյուր արտահայտության տակ գրեք Մորմոնի Գրքի ճիշտ հատվածը: Հատվածներից մեկը դուք պետք է օգտագործեք երկու անգամ:

Ապաշխարեք և մկրտվեք:

Ունեցեք պայծառ հույս:

Սիրեք Աստծուն և բոլոր մարդկանց:

Հետևեք Քրիստոսին:

© 2010 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները պաշտպանված են: Printed in USA. Անգլերենի հաստատումը. 6/09: Թարգմանության հաստատումը. 6/09: *First Presidency Message, September 2010* -ի թարգմանությունը: Armenian 09369 201

Հավատք • Ընտանիք • Սփոփանք

Աճող սերնդի համար հոգ տանելու մեր պարտականությունը

Ուսումնասիրեք այս նյութը և, ինչպես հարմար է, քննարկեք այն քույրերի հետ, ում այցելում եք: Օգտագործեք հարցերը, որոնք կօգնեն ձեզ ամրացնել ձեր քույրերին և դարձնել Սփոփող Միությունը ձեր իսկ կյանքի ակտիվ մասը:

Սուրբ գրություններից. Առակաց ԻԲ.6, Եփեսացիս Զ.4, Ենովս 1.1, Ալմա 53.20-21, 56.47, 57.27

Առանց հոգատարության մեր աճող սերունդը կարող է Մոսիա 26-ում նկարագրվող սերնդի նման դառնալու վտանգի առաջ հայտնվել: Շատ երիտասարդներ չէին հավատում իրենց հայրերի ավանդույթներին և դարձան առանձին մի ժողովուրդ՝ ինչ վերաբերվում է նրանց հավատքին, ընդմիշտ այդպիսին էլ մնալով: Մեր աճող սերունդը նմանապես կարող է շեղվել ճանապարհից, եթե նրանք չհասկանան իրենց դերը Երկնային Հոր ծրագրում:

Այսպիսով, ի՞նչը կարող է աճող սերնդին ապահով պահել: Եկեղեցում մենք սովորեցնում ենք փրկող սկզբունքներ, և այդ սկզբունքները ընտանեկան սկզբունքներ են, սկզբունքներ, որոնք կօգնեն աճող սերնդին ընտանիք կազմել, սովորեցնել այդ ընտանիքին, և նախապատրաստել այդ ընտանիքին արարողությունների և ուխտերի համար, և այնուհետև հաջորդ սերունդը կսովորեցնի հաջորդին, և այդպես շարունակ:

Որպես ծնողներ, ղեկավարներ և Եկեղեցու անդամներ մենք պատրաստում ենք այս սերնդին Աբրահամի օրհնությունների համար, տաճարի համար: Մենք պարտավորություն ունենք շատ հստակ լինել ընտանիքի մասին հայտարարության մեջ գտնվող կարևոր վարդապետությունների կարևոր դրույթների վերաբերյալ: Մայրությունը և հայրությունը հավերժական դերեր ու պարտականություններ են: Մեզանից յուրաքանչյուրը պատասխանատու է ծրագրի արական կամ իգական կեսի համար:

Մենք կարող ենք սովորեցնել այս վարդապետությունը ցանկացած միջավայրում: Մենք պետք է հարգանքով խոսենք ամուսնության և ընտանիքի մասին: Եվ մեր օրինակից աճող սերունդը կարող է մեծ հույս ու հասկացողություն ստանալ, ոչ միայն բառերից, որ մենք ասում ենք, այլ ընտանիքի հոգին զգալու և տարածելու ուղիներից:

Ջուլի Բ. Բեք, Սփոփող Միության գերագույն նախագահ

Մեր պատմությունից

1995թ. սեպտեմբերի 23-ին Սփոփող Միության ընդհանուր հավաքին Նախագահ Գորդոն Բ. Հինքլին, քույրերին դիմելով, ասել է. «Աշխարհը, որում մենք ապրում են, անկարգության, փոփոխվող արժեքների աշխարհ է: Տհաճ ձայները տարբեր բաներ են աղաղակում ժամանակի ընթացքում փորձված վարքագծի չափանիշներին հակառակ»:[1] Այնուհետև Նախագահ Հինքլին շարունակեց՝ քույրերին, Եկեղեցուն և, ի վերջո, ողջ մարդկությանը ներկայացնելով «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» փաստաթուղթը:

Հետագա տարիների ընթացքում այս մարգարեական փաստաթուղթը թարգմանվեց մի շարք լեզուներով և տարածվեց աշխարհի ղեկավարներին: Այն խնդրում է քաղաքացիներին և կառավարության պաշտոնյաներին «միջոցառումներ անցկացնել ուղղված ընտանիքների, որպես հասարակության հիմնական միավորների, պահպանմանն ու ամրապնդմանը»:[2]

Հայտարարությունը Վերջին Օրերի Սրբերի համար դարձել է ընտանիքի վերաբերյալ հիմնարար սկզբունք, հայտարարություն, որից մենք կարող ենք ամուր բռնել և իմանալ, որ դրա ցուցումներով ապրելով մենք ամրացնում ենք մեր ընտանիքներն ու տները:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Gordon B. Hinckley, “Stand Strong Against the Wiles of the World,” *Ensign,* Nov. 1995, 99.
2. Տես «Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* հոկտ. 2004, 49:

Ի՞նչ կարող եմ ես անել:

1. Ինչպե՞ս կարող եմ ես օգնել իմ քույրերին օգտագործել «Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին»-ը աճող սերնդի համար հոգ տանելիս: Դուք կարող եք կիսվել հայտարարության օրինակներով և օգնել ձեր քույրերին գտնել և նշել այն հատվածները, որոնք լավագույնս կսովորեցնեն հիմնական վարդապետությունները:

2. Ինչպե՞ս կարող եմ հոգ տանել աճող սերնդի համար: Դուք կարող եք ձեռք մեկնել ձեր ծխի, ճյուղի, ընտանիքի կամ հասարակության անդամներին, ում օգտակար կլինեն ձեր ուշադրությունն ու սերը:

Լրացուցիչ տեղեկության համար, այցելեք www.reliefsociety.lds.org:

© 2010 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները պաշտպանված են: Printed in USA. Անգլերենի հաստատումը. 6/09: Թարգմանության հաստատումը. 6/09: *Visiting Teaching Message, September 2010* -ի թարգմանությունը: Armenian 09369 201